

**ԾԱԿՈՏԿԵՆ ՍՐՈՂՈՒՆԴԻ ՈՎԴԻՈՒԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ  
ՀԻԴՐՈՊՈՆԻԿ ԵՎ *IN VITRO* ՀԱՄԱԿՑՎԱԾ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ**

ՀՀ ԳԱԱ Գ.Ս. Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պորբլեմների ինստիտուտ

Դեղահումքի որակի կարևոր ցուցանիշներից մեկը ռադիոնուկլիդների (ՌՆ) քանակի համապատասխանությունն է ընդունված ռադիոնուկլիդիական անվտանգության չափանիշներին: Դեղաբույսերի միջոցով ՌՆ-ը անցնում են մարդու օրգանիզմ հետևյալ փոխանցման շղթայի միջոցով՝ ոռոգման ջուր-հող-դեղաբույս-դեղամիջոց-մարդ: Այս առումով, որոշակի հետաքրքրություն է ներկայացնում արհեստական ( $^{90}\text{Sr}$ ,  $^{137}\text{Cs}$ ) և բնական (U) ՌՆ-ի կուտակման առանձնահատկությունների ուսումնասիրումը հիդրոպոնիկ և *in vitro* համակցված եղանակով մշակված ծակոտկեն սրժուկի (*Hypericum perforatum* L.) վերգետնյա զանգվածի օդաչոր դեղահումքում:

Թե բացօթյա հիդրոպոնիկայում և թե հողում ծակոտկեն սրժուկի դեղահումքում  $^{137}\text{Cs}$ -ի պարունակությունը գերազանցել է  $^{90}\text{Sr}$ -ին, ընդ որում, հողում ավելի մեծ (6,0 անգամ) չափով: Հիդրոպոնիկ պայմաններում տարբեր լցանյութերում (հրաբխային խարամ, գլաքար) մշակված ծակոտկեն սրժուկը ռադիոքիմիական ցուցանիշներով չի տարբերվել:

Պարզվել է նաև, որ հողային բույսերը գերազանցել են հիդրոպոնիկ բույսերին ինչպես բնական (U), այնպես էլ արհեստական ( $^{90}\text{Sr}$ ,  $^{137}\text{Cs}$ ) ռադիոնուկլիդների պարունակությամբ: Ծակոտկեն սրժուկի գումարային  $\beta$ -ակտիվության մեջ մարդու առողջության համար ամենավտանգավոր համարվող  $^{90}\text{Sr}$ -ի և  $^{137}\text{Cs}$ -ի մասնաբաժինը հիդրոպոնիկայում կազմել է 6,8%, իսկ հողում՝ 12,8%: Անկախ մշակման պայմաններից,  $^{90}\text{Sr}$ -ի և  $^{137}\text{Cs}$ -ի պարունակությունը դեղահումքում չի գերազանցել սահմանաթույլատրելի խտությունը (ՄտԹ  $^{90}\text{Sr}$ -100,  $^{137}\text{Cs}$ -400Բք/կգ):

Այսպիսով, ուսումնասիրությունները ցույց են տվել, որ բացօթյա հիդրոպոնիկայի պայմաններում ծակոտկեն սրժուկի դեղահումքը ռադիոնուկլիդիապես ավելի մաքուր է, քան հողային մշակույթից ստացվածը:

Vardanyan A.P., Ghalachyan L.M., Sargsyan E.D.

**SOME RADIOACTIVE INDICES OF ST. JOHN'S WORT IN HYDROPONICS AND *IN VITRO* COMBINED CULTURES**

G.S. Davtyan Institute of Hydroponics Problems NAS RA

**Summary**

The researches have shown that the medicinal raw material of St. John's Wort (*Hypericum perforatum* L.) grown in the open air hydroponics conditions radioactively is more clean than the medicinal raw material received from the soil culture.